

ՀԱՆԴԵՍ ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ

ՍՊԻՏԱԿԱՅԱՑՆ ԿՈՌԻՒՆԿ ՍՄԵՐԻԿՈՅ

Թայտնի է ամենուն որ օդախաղաց թռչնոց մէջ ամենէն աւելի յանդուզն ու երկայնագնաց ճանապարհորդողք կոռունկը ին : Ասոնք նախ օդոյ մէջ սաստիկ կը բարձրանան խմբովին , և հօն կարգի կը մանան յուղեռութիւն , ձեւացընելով սովորաբար եռանկիւնի խումբ մը՝ գիւրութեամբ ճեղքելու ընդդիմարդել օգը . և երբեմն կ'ամ փոփին ՚ի ձեւ շրջանակի , երբ հողմն սպառնայ ցրուել զեռանկիւնին և կամ ընդ առաջ ելլայ յափշտակիչ արծի-

ւը : Եւ որովհետեւ ընդհանրապէս զիշեր ատեն կը ճանապարհորդեն , վասն այնորիկ առաջնորդնին՝ որ առջնէն կ'երթայ ճամբայ բանալու համար , 'ի պահանջել հարկին երբ պէտք ըլլայ փոխել ուղղութիւնը , ազդարար ձայն մի կ'արձակէ իր ընկերացը . և նոյն ձայնը կը կրկնէ նաև բովանդակ խումբը : Եւ ահա Հոմերոս կոընկանց այս ձայնը պատշաճ կը համարի բաղդատել ծրովացւոց աղաղակին հետ՝ պատերազմի ժամանակ՝ այս կերպով .

Խաղային տրութեանք ՚ի ձայն աղաղակի զօրէն հաւուց ,
Որդունակ ընթանան ընդդէմ երկնից կոընկանց թըռիչք՝
Որ փախուցեալ ՚ի ձմերայնոյ և յանհնարին թօնքնկեցաց՝
Թռիչս առեալ ընդ հոսանս Ովկիանու զընան կանչիւք ,
Նախմիրս արանցըն թըռկաց և օրահաս տանել մահու ,
Եւ ՚ի բարձրանց օդապար ածեն նոցա մարտ գրքնդակ :

(Խլանան Գիրք . Գ. 2.)

Եւ ահա այս կերպով կոռունկը՝ ծընունդք հիւսիսակողմեան աշխարհաց , յայց կ'ելլան բարեխառն կլիմայից , զիմելով մինչև ցհարաւ :

Ամերիկեան սպիտակագոյն առաջիկայ կոռունկն , միւսերուն նման աներկելիւղ ճանապարհորդ է . որ ամեն տարի կը հատանէ ամերիկեան ցամաքին բովանդակ երկայնութիւնը , Պաֆֆինի նեղուցն սկսեալ մինչև ՚ի փոքր Անդի-

լեան կղղիս : Այս թռչունն կը թխսէ հիւսիսային աշխարհաց ցրտասառոցց կողմերը , և մեր կոընկանց նման բոյնը ճամբախութ տեղուանք կը դնէ՝ խոտոյ թանձրախիտ և բարձր սիղոց մէջ . և երբ ձագունք թռչելու չափ կը մեծնան , անոնց հետ մէկտեղ դէպ ՚ի հարաւ ճանապարհորդութեան կ'ելլայ : Այն եղանակին յորում տունկերն կը սկսին սաղարթաթափ լինել , և հիւսի-

սային աշխարհաց ճախին ջուրերն կը լցուին լցնաթաթ վայրենի թռչուններով (սագ, բադ, կարապ), յայնժամ կոռունք երամովին յիսուն կամ վախտուն զյուգ միանդամայն, կը թռանին ՚ի մեծ բարձրութիւն՝ մեղմագոյն մլթնողրա մը վնտուելով, կը յառաջն անընդհատ գիշեր ու ցորեկ այնպիսի արագ ու զօրաւոր ընթացիւք, որ և ոչ բուռն փոխթորիկն կրնայ խոտորել զիրենք ՚ի ճանապարհէն. մանաւանդ թէ մասնաւոր ախորժ կը զգան օդոց խառնակութենէ: Բայց ոչ թէ մէկ անգամով կը կատարեն իրենց ուղեւորութեան ասպարէզը կամ ընթացքը, այլ կանկ կ'առնուն ուրեք ուրեք՝ ՚ի միջանկեալ տեղիս, յապաղելով երբեմն նաև մէկ քանի շարաթ, մինչեւ որ օդոց ցըրտութիւնն ատիպէ զիրենք փութալ յուղերութիւն:

Ամերիկոյ Միացեալ-Նահանգաց կերոնական ու արեմուեան կոլմերը՝ կոռունին սովորաբար հոկտեմբեր ամսացն կէսերը կամ նոյեմբերի սկիզբները կը հասնի: Երակի որչափ ալ բազմաթիւ ըլլան, հազիւ թէ կը տեսնուին ամսոց միջն մտագիր աչօք դիտելով. անանկ որ առէկ որոշելու համար՝ հարկ է պայծառ ըլլայ երկինքն. և օդոց ու երկնից պայծառութեան ատեն սովորութիւն ունին աւելի հանգարտ ու խոնարհ թռչելու: Գեղեցիկ է տեսնալ զասոնիք թռչել դաշտաց ու լերանց վրայէն երկայնաձիգ պարանոցաւ ու թխադոյն թաթերով՝ զորս կ'երկնցընեն զէպ ՚ի ետևի կոպմը:

Կոռունին, որ թերես ամերիկեան ցամաքին թայնոց մէջ ամենէն բարձրն ու գեղեցիկն է, զլուխը երկելնցուցած վիճակի մէջ մինչեւ հինգ կամ վեց ոտնաշափ երկայնութիւն կ'ունենայ. սպիտակ է իբրև զձիւն, թեւոց ծալիբերը միայն սեազոյն: Գլուխը կարմիր է, խոկ սրունկները մերկ ու թխագոյն: Նորահասակ կոռունկը, զոր բնապատումք սիսալմամբ առանձին ցեղմը համարեցան, և անուանեցին կոռունկ քառական, մոխրա-կարմիագունի կը:

Խօտինայ, սկագոյն թեսերով և ամենակարծ տտամբը: Ծատ աճել հսասակին այս գոյնն կը փոխուի ՚ի թռւս-գորշագոյն, ՚ի կապրոյտ-թխագոյն, ՚ի պայծառ-մոխրագոյն և վերջապէս ՚ի սպիտակ-ձիւնագոյն: Առաջիկայ երկու կոռունկներն, որ լոնտուայի հոչակաւոր կենդանաբան նութեան պարափղին կը վերաբերին՝ գեր նորահասակ են:

Կոռունին իրեն բնակութեան համար ճախճախուտ անտառներ և ընդարձակ լիճեր կը փնտուէ. սակայն երբեմն չոր տեղուանիք ալ կ'երթայ կերակուր հայթայթելու համար: Թէ ճճակեր է և թէ ընտակեր. և ընդհանրապէս չիշներ հողոց վրայ մինչեւ որ սերմանուած չըլլայ, վիճուալու անդ զսերմանս զըրս վիթպած է տափանն ծածկել հողոց տակ: Կ'ուտէ անխտիր՝ զսցէց աւելի ախորժանօք՝ որդ, սողոն, միջատ, գորտ և ճճի: և թերես այս է թաց տեղուանք սիրելուն պատճառը, վասն զի կը գըտնայ յայնպիսի աեղիս առանց մեծ դըժուարութեան այս տեսակ ուտեսիքները: Հրահանգեալ կոռունկը կորիճ որսորդ է մկանց. որ կտուցի մէկ հարուածով կը սպաննէ մէկէն զժնամին. կտուցին երկայնութիւնը գրեթէ չորս բթաշափ է:

Երբոր ամերիկեան կոռունկը վտանգ մը կը տեսնայ առջին (նոյնը կ'ընէ նաև մեր աշխարհաց կոռունին), ահագին ձայն մը կ'արձակէ. և կը կրկնեն զնոյն բոլոր շըլաբնակ կոռունկներն գրեթէ կէս ժամու շափ. ապա կը ցատկեն մէկէն իրենց բնակտարանէն, և կը սպանան ընդ օդ անհասանելի բարձրութեամբ: Կը պատճեն որսորդը թէ կոռունկները զիշեր ժամանակ միջերնէն մէկը պահապան կը կարգեն. և մինչեւու բովանգակ երամն ՚ի քուն է, գիշերապահն կը հսկէ բարձրագլուխ. և թէ որ անսովոր առարկայ մը տեսնալու ըլլայ շուտ մը ձայն կու տայ իր ընկերացը սուր ու զօրաւոր աղապակաւ, պաշտպանելու իրենք զիրենք թշնամուոյն զէմ. և բաւական ճարտարք են ՚ի կոռուել:



ՍՊԻՏԱԿԱԳՈՅՆ ԿՈՌԵՆԿ ԱՐԵԲԻԿՈՅ

Ամերիկեան այս սպիտակագոյն կը-
ռունկն թէ որ կը թուելու ըլլոյ , ընաա-
նի ու սիրելի է . բայց վայրենութեան
վիճակի մէջ որսորդութիւնն իսկ չէ | անվտանգ . վասն զի երբեմն կատացի
մէկ հարուածով կը ծակէ մէկ կողմանէ
՚ի միւսն որսորդին ձեռքը :